ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ*

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

09.01.2024թ.                                ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանս, քննության առնելով «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի՝ ի դեմս ներկայացուցիչ Աննա Ավետիսյանի ներկայացրած հայցադիմումն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր՝ Ա.Գ.Մալխասյանի 30.11.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑԻ

«ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ն 04.01.2024թ.-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր՝ Ա.Գ.Մալխասյանի 30.11.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Գտնում եմ, որ հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ, 234.5.-րդ հոդվածների պահանջներին, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ:

Միևնույն ժամանակ դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով և դատական ակտը հրապարակել հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5.-րդ, 234.6.-րդ և 234.9. հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի՝ ի դեմս ներկայացուցիչ Աննա Ավետիսյանի ներկայացրած հայցադիմումն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր՝ Ա.Գ.Մալխասյանի 30.11.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել փետրվարի 19 2024 թվականին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում՝ այն դատական տեղեկատվական համակարգում տեղադրելու միջոցով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**ԴԱՏԱՎՈՐ**            **ԱՎԱԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

ԱՎԱԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ